Կարեն Խուրշուդյան
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի հայցորդ
ORCID ID: 0009-0000-8562-7643
khurshudyan@hotamial.fr
DOI: 10.54503/1829-0116-2025.2-160

ՀԱՅ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՈԵԶԻԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՍՅՈՒՐՌԵԱԼԻՍՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ*

(Հովհ. Գրիգորյանի և Վ. Հակոբյանի ստեղծագործությունների օրինակով)

Բանալի բառեր - *հայկական պոեզիա, ֆրանսիական սյուրռեալիզմ, Հովհաննես Գրիգորյան, Վարդան Հակոբյան, սիմվոլիզմ, սյուրռեալիստներ, ազգային շեշտադրումներ:*

Հոդվածը քննում է հայ ժամանակակից պոեզիայի՝ մասնավորապես Հովհաննես Գրիգորյանի և Վարդան Հակոբյանի ստեղծագործությունների կապը ֆրանսիական սյուրռեալիստական ավանդույթի հետ: Վերլուծությունը բացահայտում է թեմատիկ և գեղարվեստական ընդհանրությունները սիրո, հիշողության, երազի և լեզվական ազատության ոլորտներում: Գրիգորյանի պոեզիան առանձնանում է հույզերի մերկությամբ և լռության ուժով, մինչդեռ Հակոբյանի գործերում սերը վերածվում է երազատես սիմվոլիզմի՝ միահյուսելով իրականությունն ու ենթագիտակցականը: Ֆրանսիացի սյուրռեալիստներ Էլյուարը, Արագոնը, Ապոլիները իրենց ստեղծագործություններում սերը ներկայացնում են որպես լեզվական և գաղափարական տարածություն: Հայ բանաստեղծները, ներշնչված այդ ավանդույթից, ձևափոխում են այն՝ հիմնվելով ազգային մշակութային և պատմական փորձառությունների վրա: Հոդվածը եզրակացնում է, որ հայ ժամանակակից պոեզիան հանդես է գալիս որպես ինքնատիպ ավանգարդ՝ համադրելով համամարդկային թեմաները ազգային շեշտադրումներով:

* *Հոդվածն ընդունվել է տպագրության 01.09.2025 թ.:*
Ուղարկվել է գրախոսության 27. 11. 2025 թ.:

Karen Khurshudyan
Post-graduate student at the Institute of Literature after
M. Abegian of NAS RA
ORCID ID: 0009-0000-8562-7643
khurshudyan@hotamial.fr

CONTEMPORARY ARMENIAN POETRY AND THE LEGACY OF FRENCH SURREALISM
(using the works of Hovh. Grigoryan and V. Hakobyan as examples)

Keywords*: Armenian poetry, French surrealism, Hovhannes Grigoryan, Vardan Hakobyan, symbolism, national accents among surrealists.*

This article explores the thematic and stylistic parallels between contemporary Armenian poetry-particularly the works of Hovhannes Grigoryan and Vardan Hakobyan and the French surrealist tradition. Through a comparative analysis, it highlights shared motifs such as love, memory, dreams, and linguistic freedom. Grigoryan's poetry is marked by emotional rawness and the expressive power of silence, while Hakobyan's texts transform love into a symbolic, dreamlike vision that blends reality with the subconscious. French surrealists like Éluard, Aragon, and Apollinaire treat love as a symbolic and ideological space, often shaped by collective memory and poetic experimentation. Although influenced by surrealism, Armenian poets reinterpret its principles through their own cultural and historical lens. The article concludes that Armenian contemporary poetry represents a unique avant-garde voice-speaking a universal language with distinctly national inflections.

Карен Хуршудян
Соискатель в Институте литературы имени М. Абегяна НАН РА
ORCID ID: 0009-0000-8562-7643
khurshudyan@hotamial.fr

СОВРЕМЕННАЯ АРМЯНСКАЯ ПОЭЗИЯ И НАСЛЕДИЕ ФРАНЦУЗСКОГО СЮРРЕАЛИЗМА
(на примере произведений Ов. Григоряна и В. Акобяна)

Ключевые слова*: Армянская поэзия, французский сюрреализм, Ованес Григорян, Вардан Акопян, символизм, национальные акценты у сюрреалистов.*

Статья рассматривает тематические и художественные параллели между современной армянской поэзией – особенно произведениями Ованнеса Григоряна и Вардана Акопяна – и французским сюрреализмом. Анализ выявляет общие мотивы: любовь, память, сны и свободу языка. Поэзия Григоряна отличается эмоциональной откровенностью и выразительной тишиной, тогда как у Акопяна любовь превращается в символическое, почти сновидческое видение, объединяющее реальность и подсознание. Французские сюрреалисты, такие как Элюар,

Арагон и Аполлинер, изображают любовь как символическое и идеологическое пространство, связанное с коллективной памятью и языковыми экспериментами. Армянские поэты, вдохновленные сюрреализмом, переосмысляют его принципы, опираясь на собственный культурный и исторический опыт. В итоге статья утверждает, что современная армянская поэзия представляет собой оригинальный авангард, говорящий на универсальном языке с национальными акцентами.

Ներածություն

Նորագույն շրջանի հայ պոեզիան՝ մասնավորապես Հովհաննես Գրիգորյանի և Վարդան Հակոբյանի ստեղծագործությունները, հաճախ դիտարկվում են սյուրռեալիստական ավանդույթի համատեքստում՝ համեմատվելով ֆրանսիական գրականության այնպիսի ներկայացուցիչների հետ, ինչպիսիք են Գիյոմ Ապոլիները, Պոլ Էլյուարը և Լուի Արագոնը։ Այս համադրությունը բացահայտում է ոչ միայն թեմատիկ ընդհանրություններ, այլև գեղարվեստական մոտեցումների խորքային փոխազդեցությունը։ Սյուրռեալիզմը՝ որպես գեղարվեստական շարժում, ձևավորվեց 20-րդ դարի սկզբին Ֆրանսիայում, սակայն նրա լեզվական ազատությունը, փիլիսոփայական խտությունը և պատկերային մտածողությունը շարունակեցին ներգործել տարբեր մշակույթների և ժամանակների գրականության վրա։

Հայ պոեզիայի մեջ սյուրռեալիստական ազդեցությունները չեն սահմանափակվում ոճային փոխառմամբ։ Հ. Գրիգորյանի և Վ. Հակոբյանի երկերը հանդես են գալիս որպես ինքնուրույն վերաիմաստավորում՝ ստեղծելով նոր լեզվական տարածություններ, որտեղ երազը, հիշողությունը, կորուստը և սերը վերածվում են խորհրդանիշների։ Այդ վերաիմաստավորումը ոչ միայն արտացոլում է սյուրռեալիզմի ժառանգությունը, այլև ընդլայնում է դրա սահմանները՝ տեղայնացնելով գաղափարները հայ մշակութային և հոգեբանական միջավայրում։

Հոդվածում դիտարկվում է Հովհաննես Գրիգորյանի և Վարդան Հակոբյանի պոեզիայի և հատկապես երկու բանաստեղծության՝ Հովհաննես Գրիգորյանի «Հենց այնպես ապրելու մի քանի գաղտնիք» և Վարդան Հակոբյանի «Ուշացած թուղթ՝ մի աղջկա...» համադրությունը ֆրանսիացի սյուրռեալիստների՝ Ռենե Շարի, Ռեյմոն Քենոյի, Անտոնեն Արտոյի և Ժակ Պրևերի միևնույն թեմատիկայով գրված ստեղծագործությունների հետ։ Վերլուծությունը հիմնվում է լեզվական կառուցվածքի, փիլիսոփայական բովանդակության և էսթետիկ դիրքորոշման համեմատության վրա՝ բացահայտելով լեզվի ազատության, էքզիստենցիալ քայքայման և սիրո տեսաբանման ընդհանրություններն ու տարբերությունները։

Գրականությունը, լինելով ոչ միայն ժամանակի արտացոլում, այլև հոգևոր տարածքի հետազոտություն, հնարավորություն է տալիս բացահայտել մարդու ներաշխարհը։ Հովհաննես Գրիգորյանի «Նոր տողից» բանաստեղծությունը, Վարդան Հակոբյանի մի շարք գործեր և ֆրանսիացի սյուրռեալիստների տեքստերը, թեև ստեղծվել են մշակութային և պատմական տարբեր միջավայրերում, միաժամանակ արտացոլում են համընդհանուր թեմաներ՝ կորուստ, սեր, հիշողություն, երազ և սիմվոլիկ մտածողություն։ Այս ընդհանրությունները վկայում են այն մասին, որ պոեզիան միջմշակութային է՝ կարող է միավորել տարբեր լեզուներ, աշխարհայացքներ և հոգևոր փորձառություններ՝ ստեղծելով համամարդկային երկխոսություն։

Կորուստի տեսությունն ու ձևակերպումը

Սիրո և կորստի զգացում: Հովհաննես Գրիգորյանի «Անսովոր արև» բանաստեղծությունն արտահայտում է սիրո կորուստը և դրա հետևանքով մարդու աշխարհընկալման փոփոխությունը։ Այս մոտեցումը հիշեցնում է Պոլ Էլյուարի պոեզիան, որտեղ սերը և կորստի զգացողությունը հաճախ ներկայացվում են որպես մարդու հոգևոր աշխարհի կենտրոնական տարրեր։

Ժամանակ և հիշողություն: Վարդան Հակոբյանի «Ճախրանք» բանաստեղծությունն անդրադառնում է ժամանակի և հիշողության թեմաներին՝ գործածելով խորհրդանշական պատկերներ։ Այս մոտեցումը համեմատելի է Լուի Արագոնի ստեղծագործությունների հետ, որտեղ հիշողությունն ու ժամանակը հաճախ ներկայացվում են որպես պոեզիայի հիմնական թեմաներ։

Գեղարվեստական միջոցներ. պատկերների գործածում: Հայ բանաստեղծները հաճախ գործածում են բնության պատկերները՝ անձրևը, ձյունը, արևը՝ որպես զգացմունքների արտահայտման միջոց։ Այս մոտեցումը հիշեցնում է Պոլ Էլյուարի պոեզիան, որտեղ բնության պատկերները հաճախ նույն գործառույթն ունեն։

Լեզվի խորհրդանշականությունը: Վարդան Հակոբյանի պոեզիայում գործածվում է խորհրդանշական լեզու՝ արտահայտելու համար բարդ զգացմունքներ և գաղափարներ։ Այս մոտեցումը համեմատելի է Լուի Արագոնի պոեզիայի հետ, որում խորհրդանշական լեզուն գործածվում է որպես պոեզիայի հիմնական միջոց։

Հ. Գրիգորյանի «Նոր տողից» բանաստեղծության առանցքը կորուստն է։ Ներկայացնում է երկվորյակ քրոջը, որ ծնվել է իր հետ ու մահացել մի քանի ժամ անց՝ վաղ առավոտյան՝ մի աղքատիկ ընտանիքում։ Բանաս-

տեղծն այդ կորստի մեջ գտնում է ոչ միայն անձնական, այլ նաև գոյաբանական հարցադրումներ. ինչի՞ համար է հիշողությունը, ինչպե՞ս է ապրում ցավը ժամանակի մեջ։ Գնում է դեպի նախածննդյան ժամանակներ, ներարգանդային հիշողություն, որն ավելի շուտ ենթագիտակցական հոսքի արդյունք է.

…Միայն ես չեմ կարողանում նրան մոռանալ, և երբեմն
վաղ առավոտյան արթնանում եմ սրտիս ցավից,
և թաց աչքերով մթության մեջ պառկած՝
օր առ օր վերհիշում եմ այն ինն ամիսները,
որ միասին ապրել ենք
մեր կյանքի լավագույն շրջանում…
(https://hovhannesgrigoryan.com/articles/nor-toghits/)

Վարդան Հակոբյանի կորուստն ավելի տարածական է՝ կորած սիրո, կորսված Երևանի ու Արցախի և ընդհանուր աշխարհի կորստի զգացողություն։ Կորուստը դառնում է ֆոն՝ հուշերի, ձգտումների, երազանքների համար.

Իմ մոլորակն Արցախն է։ Սիրելի Ջո։
Այսօր և միշտ։
Հավիտյանս հավիտենից։
Այսօր՝ այսքանը։ Աստված պահապան բոլորիս… (Հակոբյան, 2022: 175)։

Ֆրանսիական սյուրռեալիստները կորուստը վերածում են սիմվոլիկ համակարգի։ Օրինակ՝ Էլյուարի դեպքում սիրո կորուստը դառնում է ամբողջական գաղափարախոսություն՝ սերը որպես հեղափոխություն, իսկ Արագոնի երկերում այն վերածվում է գրական դիմադրության ձևի։

Սերը՝ որպես լեզվական և զգայական առեղծված

Հովհաննես Գրիգորյանի պոեզիայում սերը հաճախ ներկայանում է իր բացակայությամբ։ Նրա տեքստերում գերակշռում է լռությունը, ներքին ցավը և հիշողության խտացված ներկայությունը՝ ի տարբերություն սիրո ավանդական արտահայտչաձևերի։ Գրիգորյանի համար սերը ոչ թե խոստովանություն է, այլ՝ բացակա, միևնույն ժամանակ զգալի ուժ ունեցող զգացողություն, որն ապրում է հիշողության և լռության մեջ.

Դու արդեն վաղուց չկաս- ինչ տարօրինակ զուգադիպություն,
չէ՞որ ես ինքս էլ վաղուց չկամ։ Ներիր, սիրելիս,
որ նորից դառնացնում եմ քո հոգին, բայց արդեն չեմ հիշում,
թե դու երբ, իսկ ես վերջին անգամ զոհվեցի երկրաշարժի
ժամանակ, հենց առաջին ցնցումից հետո։ Եվ երբ

գնդակը խոցեց ինձ ինչ-որ ցեխակոլոլ խրամատում-
դու արդեն շատ վաղուց չկայիր:
(https://hovhannesgrigoryan.com/articles/sirayin-banasteghtsutyun/)

Ի տարբերություն Հովհ. Գրիգորյանի՝ Վարդան Հակոբյանի ստեղծագործություններում սերը վերածվում է հիշողությամբ սնվող տեսիլքի: Նրա բանաստեղծություններում սիրած անձը երազում ներկայանում է միաժամանակ երեք կերպարով՝ բոլորը նույն անձի տարբեր արտահայտություններ, որոնք խորհրդանշում են իդեալական, բայց երբեք ամբողջական չեղած սերը: Այս բազմաշերտ պատկերացումը ստեղծում է մի երազային աշխարհ, որտեղ սերը ապրում է որպես մշտապես վերաիմաստավորվող զգացողություն.

Սերը արթնացնում է
բոլոր բջիջները,
նրանց տեղն իմանալով՝
մեկ առ մեկ ոչնչացնում:
Հետք չի թողում իրենից,
և ամեն այցին
գալիս է իբրև կույս (Հակոբյան, 2023: 66):

Ֆրանսիացի սյուրռեալիստների՝ մասնավորապես Պոլ Էլյուարի և Լուի Արագոնի երկերում սերը նույնպես հանդես է գալիս որպես սիմվոլիկ տարածք: Էլյուարը սիրո մասին գրում է բառերի ուժով՝ փորձելով լեզվով զոյացնել զգացմունքը, մինչդեռ Արագոնը սերը կապում է կոլեկտիվ հիշողության, քաղաքական պայքարի և բանաստեղծության ազատության հետ: Այս մոտեցումներն ընդգծում են սիրո բազմաշերտ բնույթը՝ որպես ոչ միայն անձնական, այլև հասարակական և լեզվական երևույթ:

Վարդան Հակոբյանի «Կարապի ծարավը՝ վերջին երգից առաջ» բանաստեղծությունը սյուրռեալիստական պոեզիայի վառ օրինակ է: Այն արտահայտում է ենթագիտակցական պատկերներ, խորհրդանշական լեզու և անսպասելի զուգորդումներ՝ ստեղծելով մի աշխարհ, որտեղ իրականությունն ու երազը միահյուսված են: Բանաստեղծության մեջ հանդիպող պատկերները հաճախ դուրս են տրամաբանական մտածողության շրջանակներից: Օրինակ՝ «ուզում էի համբուրել պարանոցդ, և հանկարծ թռավ կարապը» տողը ստեղծում է անսպասելի կապ սիրո և կարապի միջև՝ զգացմունքը վերածելով խորհրդանշական շարժումի (https://granish.org/vardan-hakobyan-2/):

Բանաստեղծը նաև գործածում է անսպասելի համադրություններ՝ միավորելով այնպիսի տարրեր, որոնք սովորաբար չեն հանդիպում միասին: Օրինակ՝ «անձրևի շնորհիվ խոտերն այնքան են արագ բարձրացել,

որ քարը չի երևում» (https://granish.org/vardan-hakobyan-2/) պատկերում բնության տարրերը վերածվում են խորհրդանիշների՝ ընդգծելով իրականության խեղաթյուրված ընկալումը։

Երազային տրամադրություն է ամբողջ բանաստեղծությունը, որը երբեմն վերածվում է մղձավանջային մթնոլորտի։ Կրկնությունների գործածումը («ամեն ինչ միշտ լինում է հետո, անգամ հետոն») ստեղծում է ռիթմ և ընդգծում ժամանակի խեղաթյուրված զգացողությունը։ Այս բանաստեղծությունը լիովին համապատասխանում է սյուրռեալիզմի սկզբունքներին՝ ընթերցողին առաջարկելով ընկղմվել ենթագիտակցական պատկերների մեջ և վերաիմաստավորել իրականության սահմանները։

Խորհրդանշական աշխարհը և երազային լեզուն

Վարդան Հակոբյանն այս առումով առավելապես մոտ է սյուրռեալիստներին։ Նրա գեղարվեստական պատկերները հաճախ զուգորդվում են երազին, տեսիլքին, կամ լեզվի անսպասելի խաղին։ Օրինակ՝ համակարգչի էկրանին աճեցված ծաղիկները, Բաբելոնից ուղարկված մանուշակագույն աղջիկը կամ շների պլզած աչքերը գիշերվա 3-ին՝ սրանք բոլորը ոչ թե պատմություն են, այլ հոգեվիճակների պոետիկ արտահայտություններ։

Հովի. Գրիգորյանի բանաստեղծություններում սիմվոլիզմը գրեթե բացակայում է. նա նախընտրում է մերկ զգացմունք, բառի ուժ՝ առանց պատկերային շերտավորության.

Եվ հանկարծ ես զգացի,
թե ինչքան է ինձ հոգնեցրել այս ձմեռը
և վերարկուն,
որ ծանր է հոգսի պես:
Մոլորված հայացքս կանաչ գույն որոնեց
ծառերի վրա
և երկնքի վրա՝ կապույտի մի ծվեն:
Եվ քաղաքի ծառերը՝ հավերժ անքուն ծառերը,
հոգնած ու տխուր
հող են որոնում նրանք
և իզուր քերծում իրենց ճյուղ-մատները
ասֆալտին: (https://www.art365.am/%D5%A1%D6%80%D5%AB-%D5%B6%D5%A5%D6%80%D5%B7%D5%B6%D5%B9%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB/hovhannes-grigoryan-9-banasteghcutyun)

Ֆրանսիական սյուրռեալիստների սիմվոլները, ի տարբերություն երկու հայ հեղինակների, ձևավորված են լեզվական ազատ խաղով, ասո-

ցիատիվ շղթաներով։ Էլյուարի գործերում հոսում են պատկերներ՝ առանց տրամաբանական կապի, բայց հստակ հուզական միջավայր ստեղծող կերպով։

Բնությունը՝ որպես տարածք ու սուբյեկտ

Հովի. Գրիգորյանի «Օգոստոսի արևը» անտարբեր է։ Այն դիտորդ է մարդկային դրամայի կողքին։

Հակոբյանի բնությունը կենդանի է, նույնիսկ բանական. «Լուսինը շտկում է ընթացքը», «Ծաղիկները բուրում են էկրանից», «Քարի ծաղկումը» և այլն։

Նրա բնությունը ոչ թե նյութական աշխարհ է, այլ ներաշխարհի արտապատկերում։ Սյուրռեալիստների երկերում բնությունը լիովին վերափոխված է. ծառերն ունեն լեզու, օդը՝ հիշողություն, լույսը խոսում է սիրո մասին։ Նրանք դիտարկում են բնությունը որպես համահեղինակ՝ բանաստեղծության մի մասնիկ։

Եվ եթե Էլյուարը գրում է. «Ես գրել եմ քո անունը ազատության վրա», ապա Վարդան Հակոբյանը կարող է ասել. «Ես ծաղիկներ եմ աճեցնում ձյան վրա», իսկ Հովհաննես Գրիգորյանը լուռ մտածում է. «Երբ ոչ ոք չի հիշում, ես դեռ հիշում եմ»։

Լեզվի ապակենտրոնացում և ազատություն. Ռենե Շարի փոխազդեցությունը։ Ռենե Շարի պոեզիան հայտնի է իր մետաֆիզիկական պատկերներով և կառուցվածքային թռիչքներով։ «Հենց այնպես» բանաստեղծությունում հանդիպում ենք լեզվական ազատությանը, որը մերժում է կաղապարները, ինչպես Շարի գործերում է (Char, 1948)։

«Բանտարկվածության առաջին նշանը հենց ազատության բարեբանումն է…». սա ոչ միայն քաղաքական իմաստ է ստանում, այլ նաև լեզվական։ Շարի պես հայ բանաստեղծը խուսափում է բացատրելուց՝ հենվելով ներքին ինտուիցիայի վրա։

Փիլիսոփայական խաղ ու հեգնանք. Ռեյմոն Քենոյի լեզվային շինարարությունը։ Քենոն գործածում է լեզուն որպես խաղի և կառուցման նյութ (Queneau, 1947)։ Հովհաննես Գրիգորյանի «Հենց այնպես…» ստեղծագործության մեջ այդ կառուցողական խաղն արտահայտվում է աբսուրդի, հեգնանքի և ինքնաճանաչման համադրությամբ։

«Հետաքրքիր է՝ խոտի համար՝ միլիարդավոր խոտերի մեջ լինել այն միակը, որ ինքն է». այս նախադասությունը լիովին կպատշաճեր Քենոյի մոտեցմանը՝ որտեղ ամենակենցաղայինը դառնում է էքզիստենցիալ հարցադրման աղբյուր։

Սերը որպես հիշողություն և կորուստ. Ժակ Պրևերի քնքշանքն ու մարդկայնությունը: Ժակ Պրևերի բանաստեղծությունները հաճախ արտահայտում են կորուստը և սերը՝ առանց մեծախոսության: «Ուշացած թուղթ…» բանաստեղծությունում սիրո թեման լուծվում է հիշողության և տարածության մեջ չմոտենալու հղմամբ՝ ինչպես Պրևերի «Բարբարա» կամ «Խոսքեր»-ում (Prévert, 1946): «Ես հրաժարվում եմ քեզ մոտ բերող բոլոր ճանապարհներից…». սերն այստեղ ավելի շուտ մենության լեզվով է արտահայտվում, քան ռոմանտիկայի:

Էքզիստենցիալ ճիչ և ինքնության մերժում. Անտոնեն Արտոյի բեկումնային մետաֆիզիկան:

Արտոն իր գրականությամբ ձգտում էր գրեթե ֆիզիկական ինտենսիվություն հաղորդել խոսքին: «Հենց այնպես»-ում ընթերցողը զգում է նման ճնշող ինտեսիվություն. բանաստեղծի ձայնը նույնքան ցավով հագեցած է, որքան Արտոյի տեքստերում (Artaud, 1938):

«Եթե քար եմ անգամ, ապա չեմ ուզում լինել այն ավելորդ մասերը, որոնց Միքելանջելոն կտրում-հեռացնում է…». Վարդան Հակոբյանի այս տողում մարդու ինքնությունը պայքարում է գեղարվեստական իդեալի և ճնշման դեմ: Դա ներքին դիմադրության ակտ է՝ ինչպես Արտոյի «Վերջին դատաստան»-ում (https://granish.org/lrutyan-tsirani/):

Բանաստեղծության ճանապարհները. մանիֆեստային դիրքորոշում:

Հայ երկու բանաստեղծներն էլ մերժում են ուղեցույցը բառացի և փոխաբերական իմաստով: Գրողը սովորաբար շարժվում է միայն իր ներսի աշխարհով, իսկ լեզուն դառնում է նրան վերադառնալու կամ հեռանալու միջոց՝ կախված ոչ թե ռացիոնալ նպատակներից, այլ հուզական ճնշումից:

«Բանաստեղծությունը դրանք շպրտել է մի կողմ՝ վաղուց, շատ վաղուց: Ես առաջնորդվում եմ հոգու սլացքներով» (https://granish.org/lrutyan-tsirani/):

Սա կարելի է կարդալ որպես նոր պոետիկ մանիֆեստ՝ համահունչ սյուրռեալիզմի՝ երազների, ենթագիտակցության և լեզվի ապամոնտաժման սկզբունքներին:

Վարդան Հակոբյանի «Իսկ Էմերսոնը ձու էր խաշում հրաբուխների վրա» բանաստեղծությունը հստակորեն պատկանում է այն գործերի շարքին, որոնք կոտրում են ժամանակի, տարածության, նարատիվի և լեզվի սահմանները՝ ստեղծելով մի այլընտրանքային իրականություն: Բանաստեղծության վերնագիրն արդեն իսկ սյուրռեալիստական ցնցման ուժ ունի. «Էմերսոնը ձու էր խաշում հրաբուխների վրա». սա մի պատկեր է, որը բուն տրամաբանությամբ հնարավոր չէ բացատրել, այլ միայն ենթագի-

տակցական կապերի և պոետական տրամադրության վերծանումն է հնարավոր։

«Իսկ Ռալֆ Էմերսոնն իր համար հանգիստ ու անվրդով ձու էր խաշում տաք ածուխների վրա հրաբուխների» (https://times.am/261677/)

Այստեղ ամերիկյան տրանսցենդենտալիզմի փիլիսոփան՝ Ռալֆ Էմերսոնը, հայտնվում է մի իրավիճակում, որը ոչ միայն անիրական է, այլ նաև խորհրդանշական։ Հրաբուխը ենթագիտակցության պայթյունի, ներքին կրքի կամ մեծ գաղափարների ծննդավայրի նշանային բովանդակություն ունի։ Իսկ նրա վրա ձու խաշելն՝ առօրյա գործողությունը բարձրացնելն է դեպի տրանսցենդենտալ մի իրավիճակ, ուր առօրյան միախառնվում է պատրանքին։ Սա Բրետոնի «կանացի ձեռքի նարնջի բույրը» ձևակերպման տիպական, երևակայական պատկեր է։ Սյուրռեալիզմը հաճախ խաղում է փոխակերպումների, մետամորֆոզների ձևով։ Այստեղ էլ հանդիպում ենք պատկերի այնպիսի հոսքի, որը գրեթե կինեմատոգրաֆիկ է՝ հիշեցնելով Դալիի կամ Բյունյուելի ֆիլմերը.

«Ես հարբել եմ սպիտակ մութով» (https://times.am/261677/):

Սա սյուրռեալիստական պարադոքսի ուժգին տարր է. մութը, որը սպիտակ է, միաժամանակ ալկոհոլի հիշատակում կա (արբել)։ Այս շփոթմունքը ոչ թե խանգարում է բանաստեղծական ընկալմանը, այլ ընդհակառակը՝ ամրապնդում է զգացական շերտերը՝ մաքրության, մթության, խելագարության և սիրո միջև։

Այս հատվածում ակնառու են նաև սրբությունը, կրոնը, էրոտիզմը։ Սյուրռեալիստներն իրենք հաճախ էին կրոնական պատկերները միահյուսում էրոտիկ մոտիվների հետ՝ թաքուն ապստամբություն ընդդեմ քրիստոնեական բարոյախոսության։ Այստեղ նույն մոտեցումն է.

«Եվ սիրո հրեշտակը, այդ պահին իջնելով երկնքից,
ներս է մտնում վանք, թևը համբուրում է խաչը
խորանի…» (https://times.am/261677/):

Հրեշտակը համբուրում է խաչը, սակայն այս գործողությունն ունի նաև մարմնական ենթատեքստ. սերը մտնում է վանք, իսկ նրա շարժումը մարմնական է՝ համբույրով։ Սյուրռեալիզմի բնույթին հատուկ են հետևյալ դիտանանսները՝ սրբություն-մարմին, աղոթք-սեր, հոգևոր-հույզ։

Հակոբյանի բանաստեղծության էսթետիկան հարազատ է Անդրե Բրետոնի, Պոլ Էլյուարի, Ժակ Պրևերի և Լուի Արագոնի սիրային պատկերագրությանը. սերը վառ է, մարմնական, հաճախ՝ սյուրռեալիստական զուգորդումներով։

«Երբ ուզում էի համբուրել քեզ, երկնքով անցնում էին անթիվ կռունկներ» (https://times.am/261677/):

Այս հատվածը հիշեցնում է Բրետոնի բանաստեղծական հմայքները, որտեղ սիրո ակտը համընկնում է թռչունների գաղթի և երկնքի շարժի հետ։ Դա պատահականություն չէ, այլ ճակատագրի գեղագիտություն։

Եվ վերջապես, ամբողջ բանաստեղծությունը լցված է խորքային ներքին տարածքներով, որոնցում հերոսը շարժվում է՝ ոչ թե արտաքին աշխարհի կանոններով, այլ ենթագիտակցությամբ.

«Ես դառն անապատների ավազահողմ ու փոթորիկներ եմ կտրել,
դժվար աղջիկ Երուսաղեմի, և սիրում եմ
ներս մտնել միայն փակ դռներով։
Դռներն իմ առաջ հանկարծ չբացես, թե չէ ետ կգնամ» (https://times.am/261677/):

Սրանք ժանրային իրացումներ են՝ ծածկագրված, բայց սիրո, գոյաբանական անորոշության և սեփական մենության լեզվով արված։

Վարդան Հակոբյանի «Իսկ Էմերսոնը ձու էր խաշում հրաբուխների վրա» ստեղծագործությունը ժամանակակից հայ գրականության սյուրռեալիստական պոեզիայի լավագույն նմուշներից է։ Այն գեղագիտական խորությամբ, լեզվական թարմությամբ և բանականության խախտումներով ծրագրային մոտեցմամբ կապվում է համաշխարհային սյուրռեալիզմի ավանդույթների հետ։ Նրա մեջ զուգորդվում են ֆրանսիական սյուրռեալիզմի ավանդույթը (Բրետոն, Էլյուար), ինչպես նաև հայկական բանաստեղծական ներաշխարհը՝ խորը հիշողության, պոռթկումների և լռության զգայությամբ։

Եզրակացություններ

Ուսումնասիրելով հայ ժամանակակից պոեզիան և ֆրանսիական սյուրռեալիզմը՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին.

1. Հայ ժամանակակից պոեզիան՝ ի դեմս Հովհաննես Գրիգորյանի և Վարդան Հակոբյանի ստեղծագործությունների, բացահայտում է մի յուրահատուկ գեղարվեստական տարածք, որտեղ համադրվում են համաշխարհային սյուրռեալիստական ավանդույթը և հայկական պոետական ներաշխարհը։ Թեև այս բանաստեղծներն ակնհայտորեն ներշնչված են ֆրանսիական սյուրռեալիզմին բնորոշ լեզվական ազատությամբ, պատկերային անսահմանությամբ և փիլիսոփայական խտությամբ, այնուհանդերձ նրանց խոսքը չի սահմանափակվում ազդեցությունների ոլորտում։ Այն վերածվում է միստիկ վերաիմաստավորման՝ խարսխված հայ ժողովրդի պատմական հիշողությանը, մշակութային զգայունությանը և ներաշխարհի խորքային շերտերին։

2. Հովհաննես Գրիգորյանի պոեզիան առանձնանում է հույզերի մեղմությամբ, լեզվի պարզությամբ, միևնույն ժամանակ՝ ներքին լարվածությամբ։ Նրա տողերում սերը հաճախ բացակա է, սակայն այդ բացակայությունը խոսում է՝ լռության, ցավի և հիշողության միջոցով։ Հովհ. Գրիգորյանի խոսքը չի ձգտում զարդարել զգացմունքը, այլ մերկացնել այն՝ դարձնելով ընթերցողին դրա անմիջական մասնակիցն ու կրողը։ Այս հանգամանքը բնորոշ է նաև ֆրանսիացի սյուրռեալիստ բանաստեղծներին։

3. Վարդան Հակոբյանի ստեղծագործություններում սերը վերածվում է երազատես սիմվոլային համակարգի։ Նրա բանաստեղծական աշխարհը լի է տեսիլքներով, բազմաշերտ կերպարներով, որոնք միաժամանակ մարմնավոր են և անշոշափելի։ Սերն այստեղ ոչ թե կոնկրետ զգացմունք է, այլ հիշողությամբ սնվող, երազում ապրվող, երբեք ամբողջական չեղած, կամ չդարձած իդեալ։ Հակոբյանի լեզուն հյուսված է խորհրդանիշներով, նշաններով, անսպասելի պատկերներով, որոնք դուրս են կառուցվածքի տրամաբանական սահմաններից՝ ստեղծելով մի մթնոլորտ, որտեղ իրականությունն ու երազն անբաժան են։ Նման երևումներ կարող ենք հանդիպել նաև ֆրանսիացի սյուրռեալիստներ Ապոլիների, Էլյուարի, Արագոնի ստեղծագործություններում, որոնց ներքին բովանդակային սահմաններում սերը վերածում են սիմվոլիկ տարածության, լեզվական փորձարկման և փիլիսոփայական որոնման։ Էլյուարը փորձում է լեզվով գոյացնել զգացմունքը, Արագոնը՝ կապել այն քաղաքական պայքարի և ընդհանրական հիշողության հետ։ Այս մոտեցումները, թեև տարբեր են հայ բանաստեղծների մոտեցումներից, միևնույն ժամանակ բացում են ընդհանուր դռներ՝ դեպի մարդկային փորձառության խորքերը։

4. Հայ ժամանակակից պոեզիան հատկապես Հովհ. Գրիգորյանի և Վ. Հակոբյանի գործերում հանդես է գալիս ոչ միայն որպես սյուրռեալիզմի ազդեցության արտահայտություն, այլև որպես դրա ստեղծագործական ձևափոխում։ Այս բանաստեղծությունները՝ իրենց փիլիսոփայական խորությամբ, գեղագիտական բազմազանությամբ և զգայական ինտենսիվությամբ, կարող են ընթերցվել որպես բանաստեղծական ինքնատիպ համաձուլումներ, որոնք խոսում են համընդհանուր լեզվով, բայց ազգային շեշտադրումներով։ Դրանք միաժամանակ բացահայտում են մարդու ներաշխարհը և արտահայտում են այն հոգևոր տարածությունները, որոնք ձևավորվել են պատմության, մշակույթի և երազի խաչմերուկներում։

Գրականության ցանկ

Էլեկտրոնային հարթակներ

1. https://hovhannesgrigoryan.com/articles/nor-toghits/
2. https://hovhannesgrigoryan.com/articles/sirayin-banasteghtsutyun/
3. https://granish.org/vardan-hakobyan-2/
4. https://www.art365.am/%D5%A1%D6%80%D5%AB-%D5%B6%D5%A5%D6%80%D5%B7%D5%B6%D5%B9%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB/hovhannes-grigoryan-9-banasteghcutyun
5. https://granish.org/lrutyan-tsirani/
6. https://times.am/261677/

Գրքեր

1. **Գրիգորյան Հ.**, Նոր տողից, Երևան, «Անտարես», 2013, 384 էջ:
2. **Գրիգորյան Հ.**, Անսովոր արև, Երևան, «Նաիրի», 1996:
3. **Հակոբյան Վ.**, Մի կռունկ անցավ, Երևան, «Սովետական գրող», 1983, 67 էջ:
4. **Հակոբյան Վ.**, Արցախա ծուխ, Երևան, «Լույս», 1989, 280 էջ:
5. **Հակոբյան Վ.**, Սոսե, Երևան, «Նաիրի», 1994:
6. **Հակոբյան Վ.**, Անդրադարձի տեսիլներ, Երևան, «Հայաստան», 2002:
7. **Հակոբյան Վ.**, Բանաստեղծությունը սահմանից դուրս, Երևան, «Գրական հայրենիք», 2006:
8. **Հակոբյան Վ.**, Ճախրանք, «Բառերի շուրթերին», Երևան, «Անտարես», 2009:
9. **Հակոբյան Վ.**, Ընտրանի, Երևան, «Արմավ», 2014:
10. **Հակոբյան Վ.**, «Անհանգիստ լռություններ», Երևան, «Գրանիշ», 2015:
11. **Հակոբյան Վ.**, Եթե իմ շունը օրագիր ունենար, Երևան, «Արմավ», 2022:
12. **Հակոբյան Վ.**, Երկեր, հ. Զ, Երևան, «Վաչագան Բարեպաշտ», 2016:
13. **Հակոբյան Վ.**, Փակիր աչքերդ, չերևաս, Երևան, «Ակտուալ արվեստ», 2011, 136 էջ:
14. **Հակոբյան Վ.**, Բառից դուրս կամ ամեն օր ուշ է, Երևան, Արմավ, 2023, էջ 66, 100 էջ:
15. **Apollinaire G.**, Guillaume. Alcools. Paris, Mercure de France, 1913.
16. **Aragon L.**, Le Crève-cœur, Paris, Gallimard, 1941.
17. **Aragon L.**, Les Yeux d'Elsa, Paris, Éditions de la Main à Plume, 1942.
18. **Artaud A.**, Le Théâtre et son double, Paris, Gallimard, 1938.
19. **Artaud A.**, Van Gogh, le suicidé de la société, Paris, 1947.
20. **Breton A.**, Manifeste du surréalisme, Paris, Éditions du Sagittaire, 1924.
21. **Barthes R**., Le degré zéro de l'écriture, Paris, Seuil, 1953.
22. **Éluard P.**, Capitale de la douleur, Paris, Gallimard, 1926.
23. **Éluard P.**, Poésie involontaire et poésie intentionnelle, Paris, Éditions Sociales, 1942.
24. **Char R.**, Feuillets d'Hypnos, Paris, Gallimard, 1948.
25. **Queneau R.**, Exercices de style, Paris, Gallimard, 1947.
26. **Queneau R.**, Cent mille milliards de poèmes, Paris, Gallimard, 1961.
27. **Prévert J.**, Paroles, Paris, Gallimard, 1946.
28. **Prévert J.**, Spectacle. Paris: Gallimard, 1951.
29. **Sartre J.**, Qu'est-ce que la littérature, Paris, Gallimard, 1947.

Referensis

1. **Grigoryan H.,** Nor toghic [From a New Line]. Yerevan, "Artbridge", 2001, (in Armenian).
2. **Grigoryan H.,** Ansovor arev [Unusual Sun], Yerevan, "Nairi", 1996, (in Armenian).
3. **Hakobyan V.,** Mi krunk ancav [A Crane Passed By], Yerevan, "Sovietakan grogh", 1983, (in Armenian).
4. **Hakobyan V.,** Artsakha Tukh, Yerevan, "Luys", 1989, (in Armenian).
5. **Hakobyan V.,** Sose, Yerevan, "Nairi", 1994, (in Armenian).
6. **Hakobyan V.,** Andradardzi tesilner [Visions of Reflection], Yerevan, "Hayastan", 2002, (in Armenian).
7. **Hakobyan V.,** Banasteghcutyuny sahmanic durs [Poetry Beyond the Border], Yerevan, "Grakan hayreniq", 2006, (in Armenian).
8. **Hakobyan V.,** Chakhrank, Bareri shurterin [In the Mouth of Words], Yerevan, "Antares", 2009, (in Armenian).
9. **Hakobyan V.,** Yntrani [Selected works], Yerevan, "Armav", 2014, (in Armenian).
10. **Hakobyan V.,** Anhangist lrutyunner (Anxious Silences), Yerevan, "Granish", 2015, (in Armenian).
11. **Hakobyan V.,** Ete im shuny oragir unenar (If My Dog Had a Diary), Yerevan, "Armav", 2022, (in Armenian).
12. **Hakobyan V.,** Erker [Works], vol. 6, Yerevan, "Vachagan Barepasht", 2016, (in Armenian).
13. **Hakobyan V.,** Phakir achqerd cherevas [Close Your Eyes, Don't Appear], Yerevan, "Actual Arvest", 2011, (in Armenian).
14. **Hakobyan V.,** Baric durs kam amen or ush e [Out of the question or late every day], Yerevan, "Armav", 2023, (in Armenian).
15. **Apollinaire G.,** Guillaume. Alcohols. Paris, Mercure de France, 1913, (in French).
16. **Aragon L.,** The Heartbreak, Paris, Gallimard, 1941, (in French).
17. **Aragon L.,** The Eyes of Elsa, Paris, Éditions de la Main à Plume, 1942, (in French).
18. **Artaud A.,** The Theater and Its Double, Paris, Gallimard, 1938, (in French).
19. **Artaud A.,** Van Gogh, the Suicide of Society, Paris, 1947, (in French).
20. **Breton A.,** Manifesto of Surrealism, Paris, Éditions du Sagittaire, 1924, (in French).
21. **Barthes R.,** The Zero Degree of Writing, Paris, Seuil, 1953, (in French).
22. **Éluard P.,** Capital of Pain, Paris, Gallimard, 1926, (in French).
23. **Éluard P.,** Involuntary Poetry and Poetry intentional, Paris, Éditions Sociales, 1942, (in French).
24. **Char R.,** Feuillets d'Hypnos, Paris, Gallimard, 1948, (in French).
25. **Queneau R.,** Exercises in Style, Paris, Gallimard, 1947, (in French).
26. **Queneau R.,** One Hundred Thousand Billion Poems, Paris, Gallimard, 1961, (in French).
27. **Prévert J.,** Paroles, Paris, Gallimard, 1946, (in French).
28. **Prévert J.,** Spectacle. Paris: Gallimard, 1951, (in French).
29. **Sartre J.,** What is Literature?, Paris, Gallimard, 1947, (in French).

Կարեն Խուրշուդյան *– հայ բանաստեղծ, թարգմանիչ, իրավաբան, գրական և հասարակական գործիչ, 2021 թվականից Հայաստանի գրողների միության անդամ, 2023 թվականից Հայաստանի գրողների միության վարչության անդամ: Գրում է բանաստեղծություններ, պոեմներ, քառյակներ, պատմվածքներ, քննա-*

դատական ու հրապարակախոսական հոդվածներ, կատարում թարգմանություններ ֆրանսերենից։ 2025 թվականի մայիսի 15-ի 0114 հրամանագրով արժանացել է Ֆրանսիայի Հանրապետության «Ազգային արժանիքի շքանշանի ասպետ» պարգևատրմանը Ֆրանսիայի նախագահ Էմմանուել Մակրոնի կողմից։

ORCID ID: 0009-0000-8562-7643
khurshudyan@hotamial.fr

Karen Khurshudyan *– Armenian poet, translator, lawyer, and literary and public figure – has been a member of the Writers' Union of Armenia since 2021 and a member of its governing board since 2023. His body of work includes poems, narrative poems, quatrains, short stories, as well as critical and publicist essays. He has also translated works from French. By Decree No. 0114 of May 15, 2025, issued by the President of France, Emmanuel Macron, he was awarded the rank of Chevalier of the National Order of Merit of the French Republic.*

ORCID ID: 0009-0000-8562-7643
khurshudyan@hotamial.fr

Карен Хуршудян *– армянский поэт, переводчик, юрист, литературный и общественный деятель, с 2021 года является членом Союза писателей Армении, а с 2023 года – членом правления Союза писателей Армении. Автор стихотворений, поэм, четверостиший, рассказов, критических и публицистических статей, а также переводов с французского языка. Указом Президента Франции Эммануэля Макрона № 0114 от 15 мая 2025 года награждён орденом «Кавалер Национального ордена заслуг» Французской Республики.*

ORCID ID: 0009-0000-8562-7643
khurshudyan@hotamial.fr